1745

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
1884 ԱՄՍՈՆ

Ա.Ռ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ

ՊԱՏԿԱՌԵԼԻ ԺՈՂՈՎՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

Printed in Turkey

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐՔԵԱՆ

1885

9(47.925)
Ա-23

10/2006
9(47.925)
Printed in Tur

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1884 ԱՄԻՆ

ԱՌ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ

ՊԱՏԿԱՌԵԼԻ ԺՈՂՈՎՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

ГОС. П. БИБ-КА АРМ. С.С.Р.
СЕМЕЙНЫЙ ФОНД

Կրօնական ժողովս Ազգային Կեդրոնական վարչութեան պատուեալ ընտրութեամբ Երեսփոխանական պատկառելի ժողովոյ Հայոց Թուրքիոյ յամի Տեառն 1884 յ՚17 ամսեանն փետրուարի սկսաւ զիւր պաշտօն ի մարտի 13, ըստ հրաւիրանաց Հոգելոյս Տէր Ներսէս Սրբազան Պատրիարքի, և կազմելով զիւրն դիւան՝ գծեց անմիջապէս զծրագիր ընթացից իւրոց ըստ տրամադրութեանց Ազգային Սահմանադրութեան։ Այժմ որ կաւարտէ զառաջին տարեշրջան պաշտօնավարութեան իւրոյ, կը փութայ մատուցանել զիւրն համառօտութիւն առ պատկառելի ժողովն Ազգային։

Ինչպէս յայտնի է, կրօնական ժողովս սկսաւ վարել պաշտօն մի այնպիսի ժամանակ, յորում իւր Սրբազան Նախագահն բացակայ կը գտնուէր ի ժողովոյ։ Նորա վերահաս հիւանդութիւնն, ապա և ցաւալի մահն հետզհետէ յաջորդելով՝ զրկեցին զժողովս ի Պատրիարքական հզօր աջակցութենէ։ Ժողովս և ոչ մի անգամ վայելեց զնախագահութիւն Պատրիարքին։ Այնպիսի պարագայ մը՝ որ տեւեց գրեթէ մինչ ի վախճան նախամեայ պաշտօնավարութեան ժողովոյս, բնականաբար ամենամեծ դժուարութիւն մը հանեց Կրօնական Ժողովոյ առջեւ, զի առ ի չգոյէ Պատրիարքական գործադիր իշխանութեան ոչ սակաւք ի խնդրոց կը մնային անլուծանելի կամ անգործադրելի։ Եւս առաւել հանրային խնդիրք՝ որոց որոշման և մանաւանդ գործադրութեանն համար ամենակարեւոր է Պատրիարքական իշխանութիւնն։

Սակայն այսքան դժուարութեանց առջեւ չընկճեցաւ ժողովս, որոշեց ձեռքէն եկածն ընել, չթողուց զեկեղեցին յանիշխանութեան, և արդարութիւն է ասել, թէ ինչ որ կարելի էր ընել՝ ըրաւ յօգուտ Եկեղեցւոյ և Ազգին։ Նա կը խոստովանի թէ իւր պաշտօնավարութեան նախամեայ շրջանին մէջ

108856 – ԿՀ
1286-2010
2012

չկարողացաւ լրացնել ամբողջովին իւր պարտքը. և կը յուսայ թէ Ազգային Ժողովն առնլով ի նկատողութիւն ըզ դժուարութիւնս բացառիկ պարագայիցն՝ յօժարամիտ կը լինի ընդունիլ իւր ջանքն և անձնանուէր աշխատասիրութիւնն։

Կրօնական Ժողովոյ ուրեմն գլխաւոր աշխատութիւնն եղաւ իւր պաշտօնավարութեան նախամեայ շրջանին մէջ լուծել և տնօրինել գլխաւորապէս մասնային խնդիրներն, որոց թիւն կը յանգի յերկու հարիւր ինն։ Սոցա մէջ աւարտեալք են հարիւր յիսուն և չորս խնդիրք. կը մնան տակաւին յիսուն և հինգ խնդիրք. որոց քննութիւնն և պատասխանները կ'սպասուին, յորոց տնկ է, որպէս զի և նոքա լուծուին հետզհետէ։

Կրօնական Ժողովս որոշեց որ իւր նիստերն փոփոխակի նուիրէ հանրային և մասնային խնդրոց, բայց պատճառաւ վերոյիշեալ դժարութեան և խըճողման մասնային խնդրոց, ստիպուեցաւ այս տարուան շրջանին նիստերուն մեծագոյն մասը զոհել մասնային խընդրոց։ Սոքա կը բաժնուին յանհատական և յամուսնական խնդիրս, որք զուրկ են յընդհանրական նշանակութենէ և ի կարեւորութենէ։ Կրօնական Ժողովս ըստ նախորդաց իւրոց արժան չդատեր հանել զայնս ի հրապարակ։

Կան քանի մը հանրական խնդիրներ, զորս ի քնին առաւ և լուծեց Ժողովս, և որոց վրայ կը հրաւիրէ զուշադրութիւն Ազգային Ժողովոյն։

Ա. Խնդիր Պատրիարքական։ — Պատրիարքական Աթոռն թափուր մնալով յետ վախճանման Տէր Ներսէս Սրբազան Պատրիարքի, թէպէտ և ըստ բնական օրինի և սովորութեան պէտք էր որ Պատրիարքական տեղապահ ընտրուէր մի եպիսկոպոս, սակայն ըստ որում Ազգային Ժողովն որոշած էր ի Նիստ ԺԴ. 31 Հոկտեմբեր 1884 ամի, որ քառասնօրեայ սգոյ օրերէն յետոյ անմիջապէս լինի ընտրութիւն Նոր Պատրիարքին։ Խառն Ժողովն կարծիք յայտնեց որ այսչափ կարճ միջոցի համար եպիսկոպոսի մը տեղապահութեան հարկ չդատուի, և առ այս՝ դիմեց Կրօնական Ժողովոյ կարծիքն առնուլ մասնաւորապէս։

Կրօնական Ժողովն ի նկատ առնլով 1868 տարւոյ մէջ Պատրիարքական փոխանորդ վարդապետին կարճ միջոցի մը համար շարունակելն զիւր պաշտօն առանց Պատրիարքական տեղապահի մը ընտրութեան, արժան դատեց որ սոյն բացառիկ պարագայի մէջ Պատրիարքական փոխանորդ Տէր Գէորգ Վարդապետն Ռուսճուքլեան ունենայ զնմանօրինակ պաշտօն զործադրելոյ զորոշմունս Ազգային Ժողովոյ։ Կրօնական Ժողովոյ բանաձևն ընդունելով ի Խառն Ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան՝ ներկայացաւ Թուղթով առ Բարձրագոյն Դուռն։ Յետ երկամեայ ժամանակի՝ Բարձրագոյն Դուռն չընդունելով այս անգամ զբացառիկ տնօրինութիւնն՝ պահանջեց որ գործադրուի Սահմանադրութեան տրամադրութիւնն, որ յետ վախճանման կամ ի հրաժարիլ Պատրիարքին կը տնօրինէ ընտրել մի Տեղապահ։ Բարձրագոյն Դրան սոյն հրամանին վրայ Կրօնական Ժողովս իւր միաձայնութեամբն՝ որ գոյացաւ ընդ ինչ ինչ պայմանօք, և որ կը տեսնուի յատենագրութեան անդ Ժողովոյն, որոշեց որ այս անգամ առ խոհեմութեան, և յուսով Պատրիարքական վաղ ընդ փոյթ ընտրութեան՝ Պատրիարքական փոխանորդ վարդապետն շարունակէ զիւր պաշտօն անուամբ Տեղապահի։

Բ. Ընծայարան հոգևոր։ — Կրօնական Ժողովոյս լուրջ խորհրդածութեանց առարկայ եղաւ մայրաքաղաքիս Եկեղեցեաց արժանաւոր քահանայներ պատրաստելու խնդիրը։ Համոզուած լինելով որ ընծայացուաց պէտք է նախապէս տալ զկարևորն դաստիարակութիւն, որպէս զի քահանայք իւրեանց կոչմանն արժանաւոր հանդիսանան, Ժողովն որոշեց հաստատել մի Ընծայարան, յորում դաստիարակուին և կրթուին յօժարեալքն ի քահանայական կոչումն։ Այս մասին իւր ծրագիրն պատրաստեց, բայց զայն գործի դնելու համար պէտք ունենալով կանխաւ որ Ազգային Ժողովն հաստատէ կամ տնօրինէ զդրամական մասն, յորմէ կախումն ունի գործադրութիւն իւր սոյն այս պարտաւորութեան և յաջողութիւն իւր ազգօգուտ նպատակին, դրաւորապէս առաջարկեց զայն Ազգային Ժողովոյն, սպասելով յուսալիր՝ որ պիտի յօժարի նա փութով օրինադրել զդրամական մասն, որպէս զի օր յառաջ կարենայ բացուիլ սոյն հաստատութիւնն, յորմէ կախեալ կայ վերականգնումն բարոյական վիճակի քահանայից, որ բաղձալի է ամենեցուն։

Գ. Դարման նիւթական վիճակի հոգևորաց։ — Մայրաքաղաքիս քահանայից ինչպէս կրթական վիճակն, նոյնպէս և նիւթականն կարօտ տեսնելով դարմանի, Ժողովս ձեռնարկեց նախ և առաջ իւրաքանչիւր Եկեղեցեաց բնիկ և պանդուխտ քահանայից վիճակագրութիւնը կատարել տալ՝ պարտուպատշաճ տեղեկութեամբք, որպէս զի հարկ եղած տնօրինութիւնը կատարել տայ։

Ժողովս ուղելով նաև ճշդիւ իմանալ Մայրաքաղաքիս քահանայից հովուական պաշտօնավարութեան վիճակն՝ մի Մէջոյց պատկեր տպագրել տուաւ, և յղեց զայն առ համօրէն քահանայս Մայրաքաղաքիս հետևեալ շրջաբերականաւ, յորում կը պարունակին պատուէրք և հրահանգք Ժողովոյն։

Կ. Պոլիս 22 օգոստոս 1884.

ԱՌ ՔԱՐՈԶԻՉՍ Ս. ԵԿԵՂԵՑԵՍՑ

«Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովն որոշեց որ մայրաքաղաքիս Ս. Եկեղեցեաց մէջ գտնուող թէ բնիկ և թէ պանդուխտ ժողովրդատեր քահանայք իւրեանց հոգևոր հովուութեան յանձնեալ բոլոր ժողովրդոց ցուցակն միամեայ ժամանակի մէջ պատրաստեն։

«Կրօնական Ժողովն ի մասին անյապաղ գործադրութեան սոյն որոշման՝ պատշաճ դատեց այս անգամ Ս. Եկեղեցեաց բարեխրատ Քարոզչաց, և ի բացակայութեան նոցին՝ Աւագերիցանց՝ յանձնարարել, որ այս որոշումն գործադրուի ընդ փոյթ։ Ուստի սոյն որոշման համաձայն ներկայ պաշտօնագիրն

ուղղելով կը յանձնարարեմք Ձեզ, որ ի ձեռն Աւագերիցուն Ս. Եկեղեցւոյդ կոչելով առ Ձեզ զքահանայսդ՝ յանձնէք նոցա զներփակեալ տպագիր օրինակս Ծխացուցին և զհրահանգս, և պատուիրէք որ ըստ ծխացուցին և հրահանգին իւրաքանչիւր քահանայ իւր ժողովրդոց ցուցակն պատրաստէ մինչ ցվերջ յառաջիկայ Սեպտեմբեր ամսոյ, և բերէ յանձնէ Ձեզ։

«Հարկ է նաև յիշեցնել որ եթէ քահանայի մը մատուցած ծխացուցին մէջ նշանակուած ծուխերէն դուրս ուրիշ ծուխեր ևս գտնուին, Ազգային Պատրիարքարանն այն ծուխերն չպիտի ճանաչէ իբր նոյն քահանայի պատկանեալ խոստովանորդիք։

«Ի լրանալ որոշեալ ժամանակին պատրաստ ծխացոյցերն հաղորդեք Կրօնական Ժողովոյ առանձին տեղեկագրով, յորում կը նշանակէք զանուանս քահանայից որք դեռ պատրաստած չլինին զիւրեանց ծխացոյցս, որոց նկատմամբ Կրօնական Ժողովս զպարտուպատշաճ տնօրինութիւնն ի գործ պիտի դնէ։»

Ժողովս որոշեց որ երբ քահանայք վերջապէս մատուցանեն զիւրեանց ծխացոյց, տրուի իւրաքանչիւրին՝ ըստ հնաւանդ սովորութեան, կոնդակ Պատրիարքական ի հաստատութիւն։

Կրօնաուսոյց. — Ազգային վարժարանաց ոմանց մէջ Կրօնի ուսումն հոգաբարձութեանց զանցառութեամբ բարձի թողի եղած լինելը քննելով՝ Ժողովս պատուիրեց յատուկ շրջաբերականաւ որ ամեն ազգային վարժարանաց մէջ պարտաւորիչ ուսումն լինի Ազգային Կրօնն և Քրիստոնէական բարոյականն. եւ որովհետեւ Ժողովս տեղեկացաւ թէ ի տեղիս տեղիս Կրօնի ուսումն յանձնուած է անհմուտ դասատուաց, վնասակար դատեց զայն. ուստի պատուէր հանեց որ Կրօնուսոյց դասատուք կանխաւ ընդունին Կրօնական Ժողովոյ վկայականն, յետ անցուցանելոյ զպարտուպատշաճ քննութիւնն։

Ե. Քննիչ Կրօնական Ուսմանց. — Ժողովս մի Յանձնախումբ կազմեց, և պաշտօն տուաւ նմա՝ անդամոց փոփոխակի այցելութեամբն ի վարժարանս մայրաքաղաքիս հսկել ի վերայ կրօնական և բարոյական ուսմանց և դասախօսութեանց նոցին։ Սոյն տնօրինութիւնն հաղորդուեցաւ առ Թաղական Խորհուրդս և Հոգաբարձութիւնս, ինչպէս նաև առ Տնօրէնս մասնաւոր վարժարանաց ի գիտութիւն և ի գործադրութիւն, հետեւեալ շրջաբերականաւ։

(Առ Թաղական Խորհուրդս.)

Կ. Պոլիս 25 սեպտեմբեր 1884

«Ազգային Կեդրոնական Վարչութեան, Կրօնական Ժողովս կազմած է մի Յանձնախումբ, պաշտօն տալով նմա ըստ 28րդ յօդուածոյ Սահմանադրութեան ազգային և մասնաւոր վարժարանաց յայց ելնելով Քրիստոնէական Կրօնի և բարոյագիտութեան ուսուցման վրայ հսկողութիւն ընել։

«Կրօնական Ժողովս կը յանձնարարէ Պատ. Խորհրդոյդ, որ թէ՛ Ձեր վերին հսկողութեան ենթարկեալ Թաղիդ ազգային վարժարանին բարեխնամ Հոգաբարձութեան, և թէ՛ ի Թաղիդ գտնուած մասնաւոր վարժարանաց տնօրինութեան պաշտօնապէս ծանուցանէք զայս որոշում յանվրէպ գործադրութիւն ներփակեալ հրահանգի Կրօնական Ժողովոյ։

Պատճէն Շրջաբերականի պաշտաման Քննիչ Ազգ. Վարչութեան։

ՊԱՇՏՕՆ

ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ

Ա. Յանձնախումբն յազգային եւ ի մասնաւոր դպրոցս աւանդուած Քրիստոնէական Կրօնի եւ բարոյագիտութեան ուսուցման վրայ պիտի հսկէ յանուն Կրօնական Ժողովոյ։

Բ. Բոլոր դպրոցներն չորս շրջանակի բաժնուելով՝ Յանձնախմբին անձիւր անդամ ամիսն մի անգամ անպատճառ պիտի այցելէ իրեն յատկացեալ շրջանակի մէջ գտնուած դպրոցներն։

Գ. Յանձնախումբն հաւաքաբար պիտի այցելէ դպրոցներն, առաջին՝ տարեկան քննութիւններն ընելու, եւ երկրորդ՝ Կրօնի դասին նկատմամբ Թաղական Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց հետ բերանացի բանակցելու համար։

Դ. Յանձնախումբն ի հարկին Ուսումնական Խորհրդոյ հետ խառն նիստ պիտի ընէ դպրոցած մէջ աւանդուելիք Ազգային դաստիարակութեան վրայ խորհրդակցելու, եւ արդիւնքը Կրօնական Ժողովոյ հաղորդելու համար ի տնօրինութիւն։

Ե. Պիտի հսկէ որ Կրօնի դասագիրք Կրօնի Ժողովէն վաւերացեալ լինին, եւ կամ՝ ըստ ամենայնի համաձայն Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութեան։

Զ. Պիտի հրաւիրէ աշխարհական կրօնուսոյցներն առնուլ վկայագիր ի Կրօնական Ժողովոյ, եւ ի մասնաւորի արտօնելիլ ի նմանէ Կրօնի դաս աւանդելու համար։ Սոյն յօդուածոյ տրամադրութեան չհամակերպելով ուսուցչաց անուններն պիտի հաղորդէ Կրօնական Ժողովոյ ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն։

Է. Կրօնի եւ բարոյականի հակառակ ըմբռնումներ ուսուցանողներն ի զգուշութիւն պիտի հրաւիրէ, եթէ անսաստեն, նոցա անուանքն պիտի հաղորդէ Կրօնական Ժողովոյ ի տնօրինութիւն։

Ը. Յանձնախումբն պիտի հսկէ որ աշակերտաց ի դպրոցս ընթերցած եւ յօտար լեզուած թարգմանած գրքերն Կրօնի եւ բարոյականի հակառակ չլինին։

Թ. Յանձնախումբն պարբերաբար իւր գործոյ մասին տեղեկութիւններ պիտի հաղորդէ Կրօնական Ժողովոյ, եւ եթէ իւր պաշտաման մէջ հանդիպի դժուարութեանց, պիտի տեղեկագրէ առ Կրօնական Ժողովս յանմիջական տնօրինութիւն։

Զ. Տեղափոխութիւն Քահանայից. — Ժողովս ի նկատ առնլով Քահանայից ոմանց և ընտանեաց նոցին պէտքն երթալ յօգափոխութիւն, որոշեց որ առ ի չաւաշխ առնուլ զեղծմանց, յօդափոխութիւն երթալու պէտք ունեցողքն ընդունին կանխաւ հրաման առ այդ ի Պատրիարքարանէ՝ ըստ հրահանգին զոր խմբագրեց Ժողովս ի պէտս նոյն պարագայից։

Ահաւասիկ նոյն հրահանգն.

28 Օգոստոս 1884.

Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովս հետեւեալ որոշումն ըրած է ի գիտութիւն և ի գործադրութիւն։

Ա. Յօդափոխութիւն գնացող Քահանայք ժամանակաւոր են, երբ բժըշ-

կական վկայագիր ներկայացնեն, որ պէտք է հաստատուած լինի նոյն Եկեղեցւոյ Քարոզչէն. և ի բացակայութեան նորին՝ Աւագերիցէն։

«Բ. Այն Քահանայք որ անձնական կամ ընտանեկան հիւանդութեան պատճառաւ ուրիշ թաղ հաստատուելու պէտք կղզան, պէտք է որ Քարոզչին կամ Աւագերիցուն միջոցաւ ներկայանան Կրօնական Ժողովոյ առ ի ստանալ զհրաման։

«Գ. Այն Քահանայք որք ժամանակաւոր օդափոխութեան համար ստացած են հրաման ի Կրօնական Ժողովոյ, պարտաւոր են իրենց թաղի Եկեղեցւոյ մէջ իւրեանց ժամարարութեան շրջանն վարել, նմանապէս Կիւրակէ, Տօնական և Խաչահանդստեան օրերը ներկայ գտնուիլ իւրեանց թաղի Եկեղեցւոյն մէջ։

«Դ. Այն Քահանայք որք անձնական տկարութեան պատճառաւ թէ և հրաման ստացած են գնալ յօդափոխութիւն, սակայն չեն պաշտօնավարեր իւրեանց թաղի Եկեղեցւոյն մէջ, այնպիսիք բնաւ երբէք չպիտի ունենան իրաւունք ոչ մկրտութեան, ոչ հարսանեաց, ոչ ննջեցելոյ, և ոչ ժամարարութեան շրջանի հաստատութիւնից մասնակցելու, նաև ոչ իսկ մատուցման Ս. Խորհրդոց։

«Ե. Քարոզիչք, միանգամայն և Աւագերիցունք պատասխանատու են առ Ժողովն Կրօնական, երբ չհաղորդեն Ժողովոյն զանուանս այն Քահանայից, որք հակառակ կը վարուին վերոյիշատակեալ որոշմանց Ժողովոյն։»

Է. Աղէքսէն լրբէբէ։ — Ժողովս ի Ընկատառնլով ազգային լրագրաց ոմանց ընթացքն կրօնական խնդրոց մէջ, ինչպէս նաև եկեղեցականաց նկատմամբ, կոչումն ըրաւ նոցա ազդասիրութեան, և առաջարկեց որ զգուշաբար վարուին սոյն խնդրոց մէջ։

Ը. Եկեղեցական հնութիւն և նուիրական էջմիածին։ — Ժողովս իմանալով որ երբեմն ի գաւառս և ի մայրաքաղաքիս ի վաճառ կը հանուին ազգային եկեղեցական հնութիւնք, և յիշատակք որ նուիրական են, և որոց կորուստն շատ անգամ անդարմանելի է, և հետևապէս ցաւ կը պատճառէ եկեղեցասիրաց և համօրէն ազգիս, շրջաբերականաւ պատուիրեց որոց անկէ է, որ եկեղեցական սուրբ անօթք և հնութիւնք չվաճառուին երբէք առանց կանխաւ հրաման ընդունելոյ ի Կրօնական Ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան.

Պատճէն Շրջաբերականին

28 փետրուար 1885

Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովն տեղեկանալով թէ ի գաւառս և ի մայրաքաղաքիս ի վաճառ կը հանուին սրբազան անօթ և ազգային եկեղեցական հնութիւնք, սոյն շրջաբերականաւ կը ծանուցանէ առաջնորդաց, առաջնորդական տեղապահաց և փոխանորդաց, և քարոզչաց թէ այսուհետև չթողատրէք և ոչ ումեք ի վաճառ հանել զեկեղեցական անօթս և զհնութիւնս, և ամենայն աչալրջութեամբ հսկէք այս մասին, և անաչառապէս ի գործ դնէք զարժանն այնպիսեաց համար, որք շահադիտաբար կը ժպրհին չյարգել զսոյն պատուէր Կրօնական Ժողովոյ։ Իսկ եթէ սոյն շրջաբերականն նախանձախնդրութեան ոգւով չգործադրուի, Պատրիարքարանս պատասխանատու պիտի ճանաչէ զնոսա, որք իւրեանց հսկողութեան պաշտօնն ըստ արժանւոյն կատարած չեն։

Թ. Յաղբիւրաւորութեան հանդէս։ — Մայրաքաղաքիս թաղից շատերուն մէջ սկըսած լինելով սովորութիւն դառնալ ննջեցելոց յուղարկաւորութիւնը փողոցէ փողոց շրջեցնել տալ ըստ պահանջման պարագայից ննջեցելոյն. յորմէ կը հետևին այլ և այլ անտեղութիւնք. Կրօնական Ժողովս ի նկատ առեալ զայս՝ շրջաբերականաւ հրամայեց որոց անկ էր. որ այսուհետև կարճագոյն և ուղղագիծ նապարհաւ տարուին ննջեցեալք ի գերեզմանատուն։

Ժ. Դամբանական Քարոզ։ — Ժողովս տեղեկանալով որ սկսուած է գրեթէ անխտիր ի վերայ ամենայն ննջեցելոց դամբանական խօսիլ ըստ պահանջման պարագայից ննջեցելոյն, որով դամբանականն սկսած իմն է կորուսանել զիւրն նշանակութիւն և ազդեցութիւն, դամբանական խօսելու պայմանները ճշդեց հետևեալ շրջաբերականաւ։

(Պատճէն Շրջաբերականի)

25 Սեպտեմբեր 1884

Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովն նկատելով որ ննջեցելոց համար Ս. Եկեղեցեաց մէջ ի Քարոզչաց երբեմն կը խօսուին դամբանականք չափազանց գովեստիւք, պատշաճ դատեց որոշել որ պաշտօնագիր ուղղուի առ ամենայն Քարոզիչս Ս. Եկեղեցեաց մայրաքաղաքիս և առ ամենայն անպաշտօն եպիսկոպոսունս և վարդապետս, որպէս զի այսուհետև դամբանական խօսուի այն ննջեցելոց վրայ, որք հանրածանօթ են յազգին իւրեանց քրիստոնէական և ազգասիրական գործովք. այն ննջեցելոց նաև, որք հանրածանօթ են յիւրեանց թաղի բարի և քրիստոնէավայել կենցաղավարութեամբ, թաղեցւոց յարգանքն և համակրութիւնն վայելած, իւրեանց կենաց շրջանին մէջ բարոյական և ուսումնական կեանք վարած, քրիստոնէական առաքինութեամբ վայլած, բարի խոստովանութեամբ և մանակցութեամբ Ս. Խորհրդոց զիւրեանց կեանս կնքած, առ Եկեղեցին Հայաստանեայց և առ Ազգն ո և է կարևոր ծառայութիւն մը մատուցած, և թէ ի կենդանութեան անդ իւրեանց՝ կատակ թողած են Ազգին ի պայծառութիւն տանն Աստուծոյ և յօգուտ հանրութեան.

ԺԱ. Վերջոյն կանոնքդ Դպրոց դասուց. — Ժողովս առժամապէս վաւերացոյց Գում-Գափուի և Թօփ-Գափուի Ս. Եկեղեցեաց Դպրաց դասուց կանոնագրերն յետ ինչ ինչ սրբագրութեանց։ Եւ որովհետև հետզհետէ ուրիշ թաղերէ ևս եկած են խնդիրք դպրաց դաս կազմելու, Ժողովս որոշեց ընդհանուր հրահանգ մը պատրաստել ի քաջալերութիւն դպրաց դասուց. որք ընդ տեսչութեամբ եկեղեցական պաշտօնէից օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն։

ԺԲ. Խնդիր ամուսնութեան հանոյ. — Սոյն ծանուցեալ խնդիրն թէև մասնային մի խնդիր էր, կատարուած ի Հաճըն քաղա-

քի Կիլիկիոյ, բայց որովհետև լրագրական թեր ու դէմ քննադատութեանց նիւթ եղաւ, օտար լրագրոյ մէջ անդամ հրատարակուելով, վասն որոյ ընդհանուր հասարակութեան ուշադրութեան առարկայ դարձաւ, և գրեթէ հանրային կերպարանք մը առաւ։ Ազգային ընդհանուր ժողովոյ մէջ հարցում ուղղուեցաւ այս առթիւ առ Կրօնական ժողովն, որ սկսած էր արդէն հետաքրքրել զայն՝ իւր իրաւանց ներքոյն չափովը, վասն զի սոյն եղելութիւնն տեղի ունեցած լինելով ի Կիլիկիա, նորա քննութիւնն և անօրինութիւնը կը վերաբերէին Ամենապատիւ Տէր Մկրտիչ Սրբազան Կաթողիկոսին Յանն Կիլիկիոյ, ուստի ժողովս առանց միջամտելու, հարկ դատեց ըստ Եկեղեցական օրինաց դիմել հետևեալ պաշտօնագրով առ Ամենապատիւ Տէր Մկրտիչ Սրբազան Կաթողիկոսին, որ քննէ խնդիրն և տեղեկագրէ։

Ամենապատիւ Տէր Մկրտիչ Սրբազան Կաթողիկոս Յանն Կիլիկիոյ

Ի պատասխանի հեռագրոյ Ազգային Պատրիարքարանիս որ ի 10 ամսեանէն Սեպտեմբերի, ընդունեցայ Ձեր Ամենապատիւ Սրբազնութեան Սեպտեմբեր 23 ամսաթիւ հեռագիրն՝ որ է, «Նարկիզի պսակի խնդրոյն առթիւ Ձեր առած տեղեկութիւնք սխալ են, ինչպէս հաստատուած է՝ ազգկան մատուցած խնդրագրէն։

Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական ժողովն, որում անմիջապէս հաղորդեցի սոյն հեռագիրն, ի գումարման անդ իւրում որոշեց որ մի պաշտօնագիր ուղղուի առ Ամենապատիւութիւն Ձեր, մանրամասն տեղեկութիւն խնդրելու Գրքեաշարեան Նարկիզի պսակադրութեան մասին, ըստ որում թէ՛ Հայ և թէ՛ օտար բազում լրագրաց մէջ նոյն պսակադրութիւնն բռնի կերպով կատարուած կը հրատարակուի այնպիսի նողկալի նկարագրութեամբք, որք ոչ միայն Ազգիս մէջ, այլ և այլակրօն հասարակութեանց մէջ անդամ ամենածանր դայթակղութեան տեղի տուած են, որոյ արդիւնքն ծանր է, և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն թշնամեաց առիթ կուտայ զրպարտել զայն յանիրաւի։

Սոյն դայթակղութեան ի դարման՝ Կրօնական ժողովն կառաջարկէ Ձերումդ Ամենապատիւ Սրբազնութեան, որ բարեհաճիք լուրջ քննութիւն մը բանալ սոյն խնդրոյն նկատմամբ, բաւական չը համարելով Նարկիզի դիրն, զոր կը յիշատակէք Ձեր հեռագրոյն մէջ. և զոր նորա հայրն բռնաբար իւր ձեռքէն կորզուած կը հրատարակէ, բողոքելով միանդամայն և արդարութեան քննչին ըրած քննութեան դէմ իսկ։

Արդ՝ Ազգային Կրօնական ժողովն կուզէ իմանալ նախ թէ Դեր. Տէր Կիրակոս Եպիսկոպոս Բէքմէզեան ո՞ր ատիճան միջամտութիւն ըրած է Նարկիզի ամուսնական խնդրոյն մէջ. և թէ ո՞ր ատիճան ստուգութիւն ունին այն ամէն բանադատական իրողութիւնք, զոր լրագիրք ոմանք կը հրատարակեն սոյն պսակադրութեան առթիւ։

Երկրորդ՝ Նարկիզիւր ամուսնութեան հաւանութիւնն ընդ Հայրապետ անուն անձին ե՞րբ տուած է, յառաջ քան դամուսնութիւնն, թէ՛ յետոյ. կամովի՞ն, թէ՛ ակամայ։

Երրորդ՝ Պսակի խորհուրդն որ ի դաւառս կը կատարուի պատշաճապէս յԵկեղեցւոյ, որպէս յայտ իսկ է, ի՞նչ պատճառաւ կատարուեր է ի տան Տէր Ստեփան քահանայի, և եթէ հարկ դատուած էր ի տան կատարել զխորհուրդ Պսակին, ինչո՞ւ չէ կատարուած ի տան Նարկիզի կամ Հայրապետին, որ առաւել քան զամենայն պատշաճագոյն էր, և մանաւանդ բնական։

Չորրորդ՝ ի՞նչ պատճառ կայ որ Նարկիզի Հայրն կը դիմէ շարունակ առ Պետութիւնն, առ Ազգային Պատրիարքարանս, առ լրագիրս և առ մասնաւոր անձինս բողոքելու տեղի ունեցած պսակադրութեան նկատմամբ։ Բայց յայլոց՝ ներփակեալ հեռագիրն որ առաւել բուռն է և նկատելի, Ազգային Պատրիարքարանս ընդունեցաւ ի միասին ընդ հեռագրոյ Ձերդ Ամենապատուութեան, որոյ վաւերական պատճէնն է։

Ազգային Վարչութեան Կրօնական ժողովն արժան կը դատէ զպատճէն նոյն հեռագրոյ հաղորդել Ձեր Ամենապատիւ Սրբազնութեան, դիտել տալով որ սոյն և նմանօրինակ գրութիւնք ներկայացուած լինելով՝ ոչ միայն Ազգային Պատրիարքարանիս, այլ և յատեան արդարութեան Նախարարութեան, հարկ ի վերայ կայ կատարել մի անաչառ քննութիւն, որպէս զի ճշմարտութիւնն յերևան գայ, և յանցաւորք յայտնուին առաջի Պետութեան և առաջի համարէն ազգին, որպէս եւ առաջի աստենի հանրային կարծեաց։

Ձեր Ամենապատիւ Սրբազնութեան արդարասիրութիւնն և նախանձախնդրութիւնն պատուոյ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ առաւել պիտի փայլին սոյն առթիւ, անարժան և պարտազանց եկեղեցականաց՝ եթէ կան երբէք սոյն խնդրոյ մէջ, տալով արժանաւոր և օրինակելի պատիժն, որպէս զի չկարծուի թէ Հայ Եկեղեցականութիւնն համերաշխութիւն ունի այսպիսի եկեղեցականաց հետ, որք կը յանդգնին պսակ դնել բռնաբար, և հռչակուի ի սփիւռս աշխարհի, թէ Հայաստանեայց Առաքելական և Ուղղափառ Սուրբ Եկեղեցին չընդունիր բնաւ երբէք զայն պսակադրութիւն որ կատարուած է բռնի, և պատժոյ կը դատապարտէ զպսակադիրսն ոյք և իցեն։

Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական ժողովն կը յուսայ իրաւամբք, թէ Ձեր Ամենապատիւ Սրբազնութիւնն պիտի բարեհաճի սոյն հանրածանօթ խնդրոյն արդար լուծումն տալ անաչառ քննութեամբ, և տեղեկագրել վաղընդ-փոյթ առ Ազգային Պատրիարքարանս։

Մնամ ես.

4 Հոկտեմբեր 1884
ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլսոյ։

Ամենապատիւ Տէր Մկրտիչ Սրբազան Կաթողիկոս Յանն Կիլիկիոյ յղեց ժողովոյս զհետևեալ տեղեկագիրն ներփակեալ ի 10 Նոյեմբերի 1884 ամի և ի համար 375 պաշտօնական նամակի։

Հաճնոյ Պսակի խնդրոյն պարագայներ ուղղուած էր Պատրիարքարանէդ, թէև ասկէ յառաջ հաղորդուեցաւ մասմը տեղեկութիւններ, բայց քանի որ պաշտօնապէս հարցումներ եղած էր թէ՛ Հաճին և թէ՛ Սիս Կիրակոս Եպիսկոպո-

սէր այս մասին ճիշդ տեղեկութիւն մը տալ մեզ, և ահա այս անգամ տրուած տեղեկութեանց բովանդակութիւնը սա է որ նոյն Նարկիզ անուն աղջիկը եօթը տարի յառաջ նշանուած ըլլալով Հայրապետ Խօճաւագեանին կուզէ եղեր անոր հետ ամուսնանալ. բայց երկու տարի չափ դուրսերէն եկած չըլլալով յիշեալ Հայրապետը, և այս վերջին օրերն ալ աղջկանը հօրեղբայրն ալ չդիտցուիր թէ ի՛նչ նպատակաւ կուզէ աղջիկը կեսարացի տղու մը տալ, և աղջիկն ալ Հայրապետի ընդերկար ատեն բացակայութեանը պատճառաւ կը հաճի քիչ մը թէև, իսկ նոյն օրերը յանկարծ Հայրապետը յերևան ելլալով կուզէ դարձեալ անոր հետ ամուսնանալ. իսկ այս անգամ դուցէ մեզ անծանօթ դաղտնիքով մը աղջկան հայր և հօրեղբայրը աղջիկը բողոքականներու ժողովարանը փախցնելով կը ճգնին նոյն Կեսարացի տղուն հետ պսակել տալ. իսկ երբոր կը լսեն զայս Հայրապետի կողմնակիցք, կերթան ու ժողովարանէն կը բերեն աղջիկը Տ. Ստեփանի տունը, և այն տեղ աղջկան հաճութեամբ ու մօրը ևս ներկայութեամբ կը պսակեն զայս ընդ Հայրապետի՝ ոչ բռնութեամբ, և ոչ ալ անանկ անտեղի գործողութեամբ, զորս կը յանդգնին յերիւրել՝ ոմանք խմբագիրը, դուցէ ոմանց խռովայոյզ և շահասէր անձանց թելադրութեամբ, որոց իսկ բոլոր յԱտանա ըլլալ կը հաստատուի. իսկ գալով Եպիսկոպոսի, զորմէ Ծանրագոյնս և լրագոյնս կը զրարանեն՝ ոչ պսակին և ոչ ալ առաջաստին ներկայ չըլլալը կը յայտնուի առ մեզ ուղղուած տեղեկագրէն. ուստի պարտ և արժան է որ անպատճառ ազգային անաչառ առաջնորդ և մանաւանդ Կրօնական ժողովն չէ թէ անձի, այլ Սուրբ Կրօնի նախանձախնդրութեամբ անհրաժեշտ կերպով քննէ, գտնէ և ըստ արժանւոյն պատժէ զչարալեղու զրպարտիչն զայնոսիկ ըստ հոգևոր և մարմնաւոր օրինաց ի պաշտպանութիւն պատուոյ ընդհանուր կղերականութեան, հրապարակելով միանգամայն զարգիւնան նոյն իսկ արդարադատութեամբ, և ահա այս անգամ ևս մի և նոյն Նարկեզ աղջկան ինքնագիր աղերսագրի պատճէնն, զոր ուղղեալ էր առ մեզ միջոցաւ մը ի Հաճընէն, ներփակեալ կուղղեմք առ Ձեզ։

Պատճէն Աղերսագրոյ Նարկիզի

Ա.մենապատիւ Վեհափառ Տէր

Սուրբ աջդ և սուրբ գարշապարդ կը համբուրեմ ես Նարկիզ Ծառայ քո։ առ ամէս եօթը տարի յառաջ Հայրապետը նիշանածս ըլլալով այս տարի Ցաւնիս ամսոյ մէջ ամուսնաս կեսարացի արզայի մը տալու եղաւ։ Ես ալ առնելու եղայ, առնելուս պատճառը այս էր որ Հայրապետը Հաճրն չէր երկու տարիէ ի վեր. այս խորհուրդին մէջ Հայրապետը եկաւ. ես ալ յօժար կամօքս առի Հայրապետը. քանի որ պակեր առէր ենթէ, լրագիրներու մէջ շատ զրպարտութիւններ կրնեն մեզ. կամ թէ առ տեղ չեղած բաներ կը խօսին, և թէ Ատանայի մէջ երկու երեք մարդիկներ այս բաներուն մէկը չեղած լրագիրներու մէջ իմ անունս կուտան. կաղաչեմ Հոգևոր Տէր իմ, այս զրպարտութիւնները և դէշ խօսքերը վերցուցէս իմ վրայէս. Ես Նարկիզ և Հայրապետ Ծառայիդ

հարցընելու ըլլաս մենք հանդիստ ուրախութեան մէջ կապրինք. և Ս. Աղբիւրը կը համբուրեմք։

Կը մնամք Սուրբ Հայրութեանդ Ծառայ քո

(Սոորագրութիւն)

Նարկիզ կին Հայրապետի Խօճաւագեանի

1884, Նոյ. 1

Ի Հաճըն

Սոյն գրութիւնն լինելով պաշտօնական տեղեկագիր ձեռնհաս հոգևոր իշխանութեան տեղւոյն՝ Հաճնոյ ամուսնական խնդիրն փակուած է ժողովոյս համար։

ԺԳ. Դրամական Վարչ. Կրօնական ժողովս թէ՛ հոգևոր այցելութեանց և թէ այլ եկեղեցական պիտոյից համար դրամոյ պէտք ունենալով անհրաժեշտաբար, և Պատրիարքարանի հաշուեկշռոյն մէջ չլինելով նշանակեալ և ոչ մի դոյզն գումար դրամոյ ընդ տրամադրութեամբ նորա, հարկ համարեցաւ դիմել առ Ազգային Ժողովն. որ ընդունելով զսոյն օրինաւոր պահանջ՝ քուէարկեց 25 000 դահեկանի գումար մը ի պէտս Կրօնական Ժողովոյ։ Սակայն ցաւ է ասել որ սոյն գումարէն հաղիւ կարելի եղաւ ընդունիլ տասն օսմանեան ոսկի ի դրամարկղէ Պատրիարքարանի վասն մի հոգևոր այցելութեան. և այն ևս բազում դժուարութեամբ։ Ժողովս կը հրաւիրէ այս կէտին վրայ Ազգային Ժողովոյ խորին ուշադրութիւնը, յայտնելով որ եթէ քուէարկեալ դրամական գումարն ղացուի նմա և այս տարի, անկարելի պիտի լինի հոգևոր այցելութեանց և այլ կարևոր պիտոյից գործադրութիւնն ի վնաս Եկեղեցւոյս։

Ահա սոքա են գլխաւոր հանրային խնդիրք, որք ներկայացած են և լուծեալք ի ժողովոյս։ Կան տակաւին ժողովոյս գրասեղանոյն վրայ խնդիրներ, որք կը սերտուին. կան ալ, որք առկախ մնացած են, ինչպէս կանխաւ ըսուեցաւ, պատճառաւ բացակայութեան գործադիր իշխանութեան։ Ա.յժմ որ ազգն բարեբաղդ է ունել զիւրն Նորընտիր Պատրիարք զԱ.մենապատիւ Տէր Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոս Վեհապետեան, Կրօնական Ժողովս կը յուսայ որ յերկրորդում ամի պաշտօնավարական շրջանի իւրոյ պիտի յաջողի լուծել թէ՛ վերոյիշեալ և թէ՛ այլ կենսական խնդիրներ, որոց տնօրինութիւնն կարևոր է և օգտակար Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ որ ի Թուրքիա.

Ժողովս իւր միամեայ շրջանի մէջ ունեցած է յիսուն և մէկ նիստ, սոցա եօթն միայն ունեցած չեն զմեծամասնութիւն, և այն ևս՝ պատճառաւ տնից։ Սոյն եղելութիւնն արդէն բաւական ապացոյց է, թէ արդի Կրօնական Ժողովս Ազգային Կեդրոնական Վարչութեան աշխատած և կատարած է իւր պարտքն ըստ կարելւոյն, յօդուտ Ս. Եկեղեցւոյ և Ազգի։

Կատարտէ Ժողովս զիւրն տեղեկագիր, պարտք համարելով յիշեցնել ի վերջոյ որ իւր բովանդակ աշխատութիւնք, քննութիւնք և որոշմունք արդիւնաւոր կը լինին, ունենալով զհզօր աջակցութիւն գործադիր իշխանութեան և ընդունելով յԱզգէն և ի Նորա Պատկառելի Երեսփոխանական Ժողովոյն ըշ

բարոյական և գնիւթական օժանդակութիւն.

Ի Պատրիարքարանի Հայոց
Ի Կոստանդնուպոլիս
1 Մայիս 1885

Ազգային կեդրոնական Վարչութեան
Կրօնական Ժողովոյ

Ատենադպիր	Ատենապետ
Վահան Վ. Գարտիզակցի	Խորէն Արքեպիսկոպոս

Անդամք

Սիմէօն Եպս. Սեֆերեան
Մատթէոս Եպս. Իզմիրլեան
Գարեգին վրդ. Թաքարեան
Յակոբ վրդ. Աշոտ Փափազեան
Տաճատ վրդ. Ոսկանեան
Յովհաննէս վրդ. Արշարունի
Գրիգոր քար. Ահմեան
Սահակ քահ. Տէր Սարգսեան
Սուքիաս քահ. Ստեփաննոսեան
Կարապետ քահ. Սեբեան
Խորէն քահ. Բեհլիվանեան

1745

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0191004